## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագրով նախատեսված Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսման (2-րդ հանրային լսում)**

*09.10.2025թ* *Շենգավիթ վարչական Շրջան*

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2025թ. հոկտեմբերի 9-ին, ժամը 11:00-ին Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագրով նախատեսված Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ Էլլադա Արամյանը և Լուսինե Մովսիսյանը, ԵԿՆ ԾԻԳ ՀՈԱԿ-ի ներկայացուցիչներ Քրիստինե Սահակյանը, Հռիփսիմե Նանագուլյանը, Աղավնի Հարությունյանը, Ռուբեն Հակոբյանը, Նատալի Մկրտչյանը, Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցիչներ, ինչպես նաև «Մայր Հայաստան» խմբակցության ավագանու անդամներ Արշակ Սարգսյանը և Արմենակ Դանիելյանը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, ով հանդես եկավ բացման խոսքով, ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ նախատեսվող գրծունեության վերաբերյալ 2023 թվականին շրջակա միջավայրի նախարարության կողմից տրվել է ՇՄԱԳ դրական եզրակացություն: Հաշվի առնելով որ փաստացի շինարարությունը դեռևս չի սկսվել, ըստ ՇՄԱԳ օրենքի անհրաժեշտ է ՇՄԱԳ նոր եզրակացություն: Համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ, որ փորձաքննական գործընթացի ժամկետը սահմանվում է 80 աշխատանքային օր, որ այս փուլից հետո, օրենքով սահմանված կարգով տրվելու է պետական փորձաքննական եզրակացություն:

Հաշվետվությունն օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման:

Լրամշակված հաշվետվությունը ներկայացնելուց հետո, օրենքով և կառավարության որոշման պահանջներին համապատասխան նշանակվել են հանրային լսումներ: Այս հանրային լսումն օրենքով 2-րդն է: Հանրային լսումների վերաբերյալ ծանուցումը հրապարակվել է առնվազն երեք հազար տպաքանակ ունեցող թերթում, ինչպես նաև տեղադրվել է փորձաքննական կենտրոնի և Երևանքի քաղաքապետարանի պաշտոնական կայքերում:

Այնուհետև փորձաքննական կենտրոնի մասնագետը ներկայացրեց նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա կանխատեսվող ազդեցությունները, որոնց վերաբերյալ առավել համապարփակ տեղեկատվության ներկայացնելու նպատակով խոսքը փոխանցեց ԵԿՆ ԾԻԳ ՀՈԱԿ-ի բնապահպանության մասնագետ Քրիստինե Սահակյանին:

Քրիստինե Սահակյանը ներկայցրերց, որ նոր ճանապարհի ծրագիծը նախագծվել է հաշվի առնելով ազգային և միջազգային չափորոշիչները և այն կառուցվելու է այնպիսի ստանդարտներով, որոնք թույլ կտան ունենալ բարելավված ճանապարհային գծանշումով, ազդանշանային համակարգով, անվտանգությամբ, ջրահեռացման համակարգով, ջրթող խողովակներով և կողնակներով ճանապարհ:

Ծրագիրը ներկայացված է մոտավորապես 6.6 կմ երկարությամբ (ներառյալ իջատեղերը) երկկողմանի երթևեկելի մասով, կենտրոնական բաժանիչ գոտիով և մայթերով նոր ծրագծի (մոտ 2.0 կմ) վրա կառուցվող քաղաքային ճանապարհից և Հրազդան գետի վրայով անցնող կամրջի 28 մ երկարությամբ երկաթբետոնե հեծաններով: Նախատեսված է, որ ճանապարհահատվածի հիմնական մասը կունենա 6 (3 x 2) երթևեկության գոտիներ:Շինարարական աշխատանքները տիպիկ են ճանապարհների և կամուրջների կառուցման նախագծերի համար

Ծրագիրը ներառում է կանաչապատում ճանապարհի բաժանիչ գոտում և կողնակների երկայնքով (ծառերի տնկում, ճիմապատում), ինչը կբարելավի օդի որակը ճանապարհի օտարման գոտում և մերձակա տարածքներում:

Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի («Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ) կողմից հավանության արժանացած կանաչապատման նախագծի համապատասխան, համաձայն որի ընդհանուր կանաչապատվող տարածքը կազմելու է շուրջ 47540 մ²՝ ընդգրկելով Կենտրոն (30100 մ²), Շենգավիթ (5890 մ²) և Մալաթիա- Սեբաստիա (11550 մ²) վարչական շրջանները:

Ճանապարհամերձ հատվածների բարեկարգման նպատակով նախագծում նախատեսվում է իրականացնել ծառերի ու թփերի տնկում, ճմապատում, ջրահեռացում, ոռոգման համակարգի իրականացում՝ ներառյալ պլաստիկ խողովակները, պոմպերը, փականները և միացումները:

Նախագծման խորհրդատուի կողմից իրականացվել են ակուստիկ և թրթռումների ուսումնասիրություններ՝ աղմուկի և թրթռումների մակարդակի ֆոնային (ելակետային) տվյալները հավաքագրելու և դրանց ազդեցությունը մոդելավորելու նպատակով: Թրթռումների մոդելավորման արդյունքները ցույց են տվել, որ որոշակի ազդցություններ կանխատեսվում են շինարարական տեղամասից մինչը առավելագույնը 30մ հեռավորության վրա գտնող տարածքում, որի հետ կապված բնապահպանական կառավարման պլանում նախատեսված են բոլոր անհրաժեշտ միջոցառումները:

Թեև ջրային ռեուրսների վրա բացասական ազդեցություններ չեն կանխատեսվում, այնուամենայնիվ Կապալառուն պարտավորվելու է իրականացնել կանոնավոր նմուշառում և չափագրումներ՝ հաշվի առնելով, որ ծրագրին հարակից տարածքները որոշակի առնչություն ունեն Հրազդան գետի և ստորին Հրազդանի ոռոգման ջրանցքի հետ:

Մեղմացնող միջոցառումները ընդգրկված են հետևյալ ուղղությունները. շրջակա միջավայրի պահպանության, շինարարական ճամբարների տեղակայում, երթևեկության և մոտեցման ճանապարհների կառավարում, արտակարգ իրավիճակների արձագանքում, թափոնների կառավարում, մակերևութային և ստորգետնյա ջրերի պահպանություն,

կենսաբազմազանության պահպանություն, աշխատանքային անվտանգություն և առողջություն, մշակութային ժառանգության կառավարում, հանրության հետ կապի ապահովում, աշխատանքային տեղամասերի վերականգնում, կանաչապատում, բնապահպանական և անվտանգության հարցերով վերապատրաստումներ:

Ամփոփելով Խոսքը Քրիստինե Սահակյանն ասաց, որ պետք է փաստել, որ նախագիծը ունի մի շարք առավելություններ.

- ճանապարհի շինարարության ավարտից հետո Երևանի մյուս ճանապարհների հետ բարելավված իր ներդրումը կունենա Երևանի հյուսիսը հարավի հետ կապող ցանցի գործում:
- թույլ է տալիս օժանդակել Երևանի արևմտյան շրջանցիկ ճանապարհին՝ առանձնացնելով արևմուտքից դեպի Երևանի հարավային արվարձանները մեկնող տրանսպորտային հոսքը և նպաստել Երևան քաղաքի կենտրոնը տարանցիկ երթևեկությունից բեռնաթափելուն,
- բարելավում է երթևեկության շարժը և նվազեցնում քաղաքային ճանապարհների բեռնվածությունը,
- ապահովվում է Կաշեգործների և Բունիաթյան փողոցների անխափան շարունակականությունը և պահպանվում է Էջմիածնի հին խճուղու գոյություն ունեցող ճանապարհը՝ միանալով Նորագյուղ թաղամասի հանգույցին,
- խցանումների թեթևացում, որը կնպաստի նաև օդի որակի բարելավմանը և այլն:

Մասնակիցների կողմից բարձրացվեցին հետևյալ հարցերը.

Արմենակ Դանիելյանը հարցադրում կատարեց նախատեսվող ճանապարհահատվածի կոյուղատար համակարգերի վերաբերյալ և հետաքրքրվեց արդյոք կան այնպիսինները, որոնք ենթակա են տեղափոխման: Քրիստինե Սահակյանը պատասխանեց, որ նախագիծը ներառում է 500 մմ տրամագծով նոր կոյուղատարի կառուցում, ինչպես նաև 27 հատ նոր անձրևհորերի կառուցում: Հռիփսիմե Նանագուլյանն իր հերթին ավելացրեց, որ կան նաև տեղափոխման ենթականեր, որոնք  տեղափոխվելու են:

Արմենակ Դանիելյանը հետաքրքրվեց նաև օտարման ենթակա գույքերի վերաբերյալ, քանի սեփականատերեր կան են և արդյոք բոլորի համաձայնությունն առկա է: ԵԿՆ ՇԻԳ-ի ներկայացուցիչներ Ռուբեն Հակոբյանն ու Նատալի Մկրտչյանը պատասխանեցին, որ 27 սեփականատեր կան, որոնք ստանալու են փոխհատուցում Ասիական զարգացման բանկի կանոնադրության հիման: Այս փուլում փոխահատուցման  գործընթացը սկսված է, թեև արդեն իսկ կան դատարն դիմած սեփականատերեր, սակայն տարվում են աշխատանքներ հաշտության գալու ուղղությամբ և կանխատեսվում է, որ էական խնդիրներ չեն լինի:

Արմենակ Դանիելյանը ավելացրեց, որ հնարավոր է, որ լինեն մարդիկ,  ովքեր իրենց համաձայնությունը չտան, այդ դեպքում  չի  բացառվում, որ  գործընթացը կերկարի և ինչ է լինելու այդ դեպքում: Գոհար Մինասյանը պատասխանեց, որ եթե փաստացի շինարարությունը  համապատասխան ժամկետում  չսկսվեց, ապա դարձյալ ՇՄԱԳ իրականացնելու անհրաժեշտություն կառաջա:

Արշակ Սարգսյանի կողմից հարց հնչեց, թե շինարարության համար քանի տարի է նախատեսված, ինչին Քրիստինե Սահակյանը պատասխանեց որ բուն շինարարության համար նախատեսված է մոտ 2 տարի: Հարց հնչեց թե որքան է կազմում ֆինանսավորումը:

Արշակ Սարգսյանը իր մտահոգությունն հայտնեց կապված նրա հետ, թե արդյոք 27 նոր անձրևհորերի նախատեսումը բավարար է:

Քրիստինե Սահակյանը պատասխանեց, որ նախագծային լուծումներն իրականացվել են համապատասխան հաշվարկների հիման վրա, իսկ նախագիծն անցել է քաղաքաշինական համալիր փորձաքննություն, ինչը նշանակում է, որ քաղաքաշինական նորմերին անհամապատասխանություն չկա: և այս

Արշակ Սարգսյանը հարցրեց նաև թե որքան է ճանապարհի լայնությունը, որին ի պատասխան Քրիստինե Սահակյանը նշեց, որ յուրաքանչյուր երթևեկելի գոտի ունենալու 3,3-3,7մ լայնություն, նախատեսված է երկկողմանի երթևեկություն՝ յուրաքանչյուր կողմում 3 երթևեկելի գոտիով :

Արմենակ Դանիելյանը հարց բարձրացրեց ծառահատումների վերաբերյալ, ինչին ի պատասխան Քրիստինե Սահակյանն ասաց, որ թեև հանրային հատվածում նախատեսված են ծառահատումներ, սակայն մեկ կտրված ծառի դիմաց նախատեսվում է տնկել 6 ծառ, իսկ եթե հատված ծառերը վտանգված կամ էնդեմիկ տեսակներ են, ապա 1:12 հարաբերակցությամբ: Ծառերի տնկումը համապատասխան քանակներով նախատեսվում է իրականացնել այն վարչական շրջաններում, որտեղից որ դրանք կտրվելու են: Հիմնական հատման ենթակա ծառերն իրենցից ներկայացնում են ոչ բարձրարժեք, ինչպես նաև մոլախոտային ծառատեսակներ:

Հարց հնչեց այն մասին, թե արդյոք Երևանում կան արդեն իսկ տեղադրված աղմկապաշտպան պատնեշներ, ինչին Քրիստինե Սահակյանը պատասխանեց, որ այո մի շարք աղմկապաշտպան պատեր արդեն կան և բացատրեց դրանց տեղադիրքը:

Ամփոփելով հանրային լսման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն տալ Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագրով նախատեսված Իսակով-Արշակունյաց ճանապարհահատվածի կառուցման կառուցման աշխատանքներին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Գոհար Մինասյան

Նախաձեռնող՝ ԵԿՆ ԾԻԳ ՀՈԱԿ,
Երևանի քաղաքային զարգացման ներդրումային ծրագրի կոորդինատոր՝ Ռուբեն Հակոբյան